

Այս մատենադարանի մէջ հաւաքուած էր 1147-էն ի վեր գրքերու մեծ հարստութիւն:

*

Լէնկիթիմուր 1402-ին տասնեակ հազարներով հայ գրչագիրներ աւարած ու հետը տարած է Սմրղանդ:

*

«Աղթամարայ գրապետ Ղուկաս՝ Լէնկիթիմուրէն ազատելու համար գրքերը՝ տակառաց մէջ լեցնելով թաղեր է» «Հ. Ղ. Ալիշան. Հայասպ., էջ 11):

*

1241-ին երբ թաթարներ առին Կարինը, «անթիւ գոյին գրեանք աստուածային գրոց՝ մեծամեծաց եւ փոքունց, դայն առեալ այլադգեաց ծախէին ընդ գոյն գնոյ» (Կիրակոս, ԽԹ.):

*

Պարսկահայոց Արտազու նահանգի (Մակու խանութիւն) Մակու Քաղաքներդին մէջ ծածկուած շատ գրեանք կան եղեր: «Շատ պէտք է երկրայիլ այս բանիս, զի Մխիթար Ապարանեցին կ'ըսէ, թէ իւր ատեն՝ ոչ շատ յետ Լէնկիթիմուրի՝ այդ ի բնէ ամուր քաղաքաբերդին մէջ, զոր Մակն Մակուայ կոչէ, «միայն ի Մակուա՝ 50 լիտր աւելի գիրք կայ՝ միայն ի Սըսոյ բերած» (Հ. Ղ. Ալիշան. Հայասպ. էջ 12):

*

Այս միեւնոյն Ապարանեցին կ'ըսէ թէ իր օրով հայերու մօտ գտնուած այլ եւ այլ տեղերու մէջ «եթէ հնար էր դամենայն ժողովել ի մի վայր, աւելի գոյր քան հազար բեռն»:

*

Յովհան Կարբեցի կաթողիկոսը կ'ըսէ, թէ «1170-ին Պապուչէքի մէջ (Սիւրիա) կորեան առաւել քան 10,000 ձեռագիրք Հայոց»:

Անհաշիւ են գիրքերը, զորս մեր հայրերը հողած, քաղած կամ զանազան ծակերու մէջ քաղուցած են:

Սանահնի վանքի միաբանութիւնը միտք յղացեր է, գրչագրական դանձերը ասպատակութեան վտանգէն զերծ պահելու համար, վանքի դիմացի խոնարանջքի մէջ այրի մը մէջ թագցնել:

1750-ական թուականներուն վանհայր Թէքլրտաղցի Աբրահամ վարդապետի աչկերտ Պետրոս, Սանահնի միաբան, իմանալով վերոյիշեալ թագստոցի մասին, Թիֆլիզէն դործաւորներ բերել տուած եւ բացած է պահածոյ դանձը: Դուրս են բերուած շատ մը գրքեր, երկաթագիր եւ բոլորագիր, որոնք գժբախտաբար երկար ատեն այրի խոնարութեան մէջ մզլեր, փտեր եւ խոյառ անպէտքացեր էին: Միայն մէկ օրնրակ նարեկացիի «Մեկնութիւն երգոց երգին» դուրս բերուեր է անեղծ վիճակի մէջ:

*

Հայաստանէն գաղթած եւ Լեհաստան բընակած Նիկօլ հայ սրիկայ հոգեւորը, չգիտեմ ի՛նչպէս, իր հետ ունեցեր է հազար հաւոր գրչագիր Անիէն տարած:

*

Սեւանայ վանքին մէջ, ուր անյիշատակ ժամանակներէ ի վեր գրչագիրներու կարեւոր հաւաքածոյ մը կը պահուի եղեր, ասկէ հարիւր տարի առաջ, օր մը վանականները, իմանալով որ Սիմէոն կաթողիկոսը պիտի այցելէ վանքը եւ վախնալով որ կը կշտամբէ զրենք գրչագիրները վատ վիճակի մէջ պահած ըլլալուն համար, վերցուցեր ծովն են քափեր:

*

Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ 1870-ին դեռ գոյութիւն ունէր 14 գրչագիր աւետարան, կազմերն արծաթապատ կողքերով եւ վրաներն կմայլով բանուած: Ասոնցմէ 3 հատը մագաղաթի վրայ բոլորագիր տառերով էին:

Յոհաննայ վանքի մեծաւոր հայրերը բոլորն ալ «գրասէր» են եղած: Ասոնցմէ վերջին յիշատակուածը՝ Զաքարիա՝ հոգակաւոր գրող եւ ծաղկող է եղեր: Առաքել Դաւրիժեցի կ'ըսէ. «Աւագակներ ներթափանցելով վանքը կրակի են մատներ, որով կորեր են գրքերը՝ ամէնն էլ «գործք սրբակրօն վարդապետաց»:

*

1845-ին քիւրտերը ներս խուժելով Ս. Կարապետի վանքը, սրբազան անօթներու, մասնապահարաններու գողօնէն յետոյ, փչացուցեր են բազմաթիւ գրչագիր մատեաններ: 1896-ին քիւրտերը նորէն ներս խուժելով վեր-